եւ նոյն անունով այն փոքր գաւառից, որն մինչեւ այսօր եւս նմանապէս կոչւում է Պարսկա-Հայաստան, որովհետեւ այդ անուամբ նա կոչւում է Մովսէս Խորենացու աշխարհագրութեան մէջ 9երորդ գաւառ, Armenia Persica, որ ընկնում է Կարսի եւ Արարատեան մէջ, եւ որտեղ գտնւում են հռչակաւոր Հեր եւ Ջարեւանդ գաւառները, որոնց գլխաւոր քաղաքն է այսօր Սալմաստ կամ Սաղմաստ։"[1]

Միեւնոյն աշխարհագիրը, խօսելով Հայկական լեզուի մասին, ասում է.

"Հայաստանի հին ժողովրդական երգերն իրենց ծագման մէջ խիստ յարաբերութիւն եւ ազգականութիւն ունին ի հնումն հռչակուած Պարսից Ֆրդուսի Շահնամէի երգերի հետ։"

Հին Պարսկաստանի՝ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութեան մասին այս կարճառօտ բացատրութիւնը տալուց յետոյ, դառնանք մեր բուն նպատակին, այն է տեսնենք թէ այն Հայերը, որոնք այսօր բնակւում են Պարսկաստանի զանազան քաղաքներում, որտեղից յառաջ եկան. կամ բացատրենք այժմեան Պարսկահայոց ծագումը։ Սակայն Պարսկահայ ասելով չպէտք է հասկանալ հին Հայաստանի այն մասը, որ Խորենացու աշխարհագրութեան 9րդ գաւառն է եւ պարունակում է իր մէջ այժմեան Ատրպատական գաւառը. մեր խօսքն այն Հայերի մասին է, որ իրենց բնակութիւնը հաստատել են բուն Պարսկաստանի կամ Արագաս-

---

1 Die Erdkunde von Karl Ritter, 10. Theil, Bd. VII. Berlin 1843. Drittes Buch, West-Asien.